

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՌՈՒՍ-
ՌԿԻՄԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
Սարգսյան Կ. Ս.**

Հոդվածում ներկայացված են ռուս-ուկրաինական պատերազմի տնտեսական հետևանքները աշխարհի երկրների տնտեսությունների համար: Հոդվածում վերլուծվում են նաև համաշխարհային տնտեսական զարգացման մարտահրավերները հետհամավարակային շրջանում՝ պատերազմի տնտեսական հետևանքների համատեքստում:

Բանալի բառեր. ռուս-ուկրաինական հակամարտություն, համաշխարհային տնտեսություն, դրամավարկային քաղաքականություն, հարկաբյուջետային քաղաքականություն, գնաձ:

2021 թվականի երկրորդ կեսից սկսած՝ COVID-19 համավարակի ազդեցությունների մեղմացման արդյունքում համաշխարհային տնտեսությունը սկսել էր աստիճանաբար վերականգնվել՝ չնայած զարգացած և զարգացող երկրների միջև վերականգնման հետազդերի զգալի տարբերությանը:

Համավարակի շրջանում կառավարությունների կողմից տնտեսությանն աննախադեպ ֆինանսական իրացվելիության տրամադրման հետևանքով առաջացած գնաձային ճնշումները աշխարհի բազմաթիվ երկրների մոնետար իշխանություններին ստիպեցին խստացնել դրամավարկային քաղաքականության գործիքակազմը: Մակայն, չնայած դրան, համաշխարհային տնտեսության համար միջազգային կառույցների կողմից կանխատեսվել էր տնտեսական աճի կայուն հետազիծ առաջիկա տարիների համար՝ ընթացիկ տարուց սկսած [2]: Փաստացի, տնտեսության վերականգնումը հետհամավարա-

կային շրջանում, չնայած կանխատեսվող վատատեսական սցենարներին, տեղի ունեցավ V-աձև սցենարով [1]:

2022 թվականի փետրվարի 24-ից սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմը խաթարեց ոչ միայն ռուսական և ուկրաինական տնտեսությունների, այլև ամբողջ համաշխարհային տնտեսության բնականոն ընթացքը: Ուկրաինան և Ռուսաստանն անխոս ներկայումս առերեսվում են տնտեսական ամենասուր ռիսկերի հետ, սակայն ակնհայտ է, որ ապրանքային շուկաներում և մատակարարման շղթաներում առաջացած լուրջ խաթարումները, ինչպես նաև արևմտյան երկրների կողմից Ռուսաստանի հանդեպ կիրառված կոշտ պատժամիջոցները զգալի բացասական ազդեցություններ կունենան մակրոտնտեսական կայունության, գնաճի մակարդակի և համաշխարհային տնտեսության դինամիկայի վրա: Արդյունքում, տնտեսական հեռանկարների հետ կապված ռիսկերը կտրուկ աճեցին, և այս ոլորտում քաղաքական փոխզիջումների որոնումն էլ ավելի դժվար իրագործելի խնդիր է դարձել:

Ռուս-ուկրաինական հակամարտության տնտեսական հետևանքները բազմաթիվ խողովակներով տարածվում են տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ապրանքային և ֆինանսական շուկաներում: Մասնավորապես, հաշվի առնելով այն իրողությունը, որ Ռուսաստանը հանդիսանում է նավթի, գազի և մետաղների, իսկ Ուկրաինան՝ ցորենի, եգիպտացորենի և արևածաղկի ձեթի հիմնական մատակարարները, այդ ապրանքների մատակարարման շարունակական կրճատումը հանգեցրել է վերջիններիս գների կտրուկ աճի, ինչից ամենաշատը տուժում են Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները: Բացի այդ, ապրանքների գների շարունակական անկայունությունը կարող է զգալի ճնշումներ գործադրել ապրանքների ֆինանսավորման գործընթացի, ինչպես նաև ածանցյալ գործիքների շուկաների վրա և նույնիսկ առաջացնել առևտրաշրջանառության նոր խաթարումներ, որոնք պարբերաբար հանգեցնում են տարբեր ապրանքների գծով առևտրի դադարեցմանը: Նման բացասական դրվագները, որոնք տեղի են ունենում աճող աշխարհաքաղաքական անորոշությունների ֆոնին, կարող են լուրջ բացասական ազդեցություն ունենալ տնտեսության իրացվելիության և ֆինանսավորման պայմանների վրա:

Համաշխարհային մատակարարման սերտորեն ինտեգրված շղթաների պայմաններում մեկ երկրում արտադրության խափանում-

ները կարող են շատ արագ տարածվել ամբողջ աշխարհում: Մասնավորապես, Ռուսաստանից և Ուկրաինայից արտադրական դետալների մատակարարումների ընդհատումն արդեն իսկ ազդել է եվրոպական արդյունաբերության վրա: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում, որոնք սերտորեն կապված են Ռուսաստանի հետ առևտրային հարաբերությունների և տրանսֆերտների հոսքերի միջոցով, տնտեսական ակտիվության թուլացում է սպասվում: Բացի այդ, ավելի քան 5 միլիոն ուկրաինացիների հարկադիր տեղահանումը հարևան երկրներ, հիմնականում Լեհաստան, Ռումինիա, Մոլդովա և Հունգարիա, էլ ավելի կխորացնեն տնտեսական դժվարություններն այդ տարածաշրջանում:

Բացի անմիջական հումանիտար հետևանքներից, ռուս-ուկրաինական պատերազմն ակնհայտորեն կհետաձգի՝ համաշխարհային տնտեսության վերականգնման գործընթացը՝ դանդաղեցնելով տնտեսական ակտիվությունը և ավելի խթանելով գնաճի տեմպերն առաջիկա ժամանակահատվածի համար և ըստ այդմ՝ լրացուցիչ բարդություններ առաջացնելով բազմաթիվ երկրների կառավարությունների համար: Սպառողական շուկայի գնաճը դեռևս պատերազմից առաջ էր սկսել կտրուկ աճել աշխարհի բազմաթիվ երկրներում՝ համավարակի հետևանքով առաջացած առաջարկի և պահանջարկի անհավասարակշռության հետևանքով: Որոշ զարգացած տնտեսություններում, այդ թվում՝ Միացյալ Նահանգներում և որոշ եվրոպական երկրներում, այն հասել է իր ամենաբարձր մակարդակին վերջին ավելի քան 40 տարիների ընթացքում՝ աշխատաշուկաների սղացման պայմաններում: Գնաճային սպասումների նկատմամբ վերահսկողությունը կորցնելու ռիսկը գնալով մեծանում է, ինչը դրդում է կենտրոնական բանկերին ավելի խստացնել դրամավարկային քաղաքականությունը: Որոշ զարգացած և զարգացող երկրների կենտրոնական բանկեր, ինչպիսիք են ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը և Լատինական Ամերիկայի կենտրոնական բանկերը, դեռևս մինչպատերազմյան շրջանում էին զգալի ճնշման տակ հայտնվել և, որպես հետևանք, արագացրել էին դրամավարկային քաղաքականության խստացման մեկնարկը: Իսկ ընթացիկ տարվա փետրվարից արդեն սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջ եկած մատակարարումների խաթարումներն էապես ավելացրին գնաճային ճնշումները, այդ թվում՝ էներգակիրների, մետաղների և պարենային ապրանքների շուկաներում: Ընդ որում, թեև

ակնկալվում է, որ մոնետար սահմանափակումները ժամանակի ընթացքում կթեթևանան, որոշ ոլորտներում կանխատեսվում է մատակարարման ճեղքվածքի պահպանում մինչև 2023 թվականը: Ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական պատերազմը զգալիորեն մեծացնում է ֆինանսական կայունության ռիսկերն ամբողջ աշխարհում և բավական անորոշություններ է առաջացնում աշխարհի երկրների և շուկաների վրա երկարաժամկետ ազդեցությունների մասով: Ինչպես նշվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Համաշխարհային ֆինանսական կայունության վերջին զեկույցում, պատերազմը, որը սկսվեց համավարակից հետո տնտեսության դանդաղ վերականգնման պայմաններում, մեծ սպառնալիք է հանդիսանում համաշխարհային ֆինանսական համակարգի համար՝ փորձարկելով վերջինիս կայունությունը [3]:

Բնականաբար, ռուս-ուկրաինական հակամարտության հետ կապված եվրոպական տարածաշրջանի տնտեսություններն ավելի մեծ ռիսկերի են ենթարկվում, քան մյուս տարածաշրջաններին՝ պայմանավորված պատերազմական գոտուն վերջինիս անմիջական աշխարհագրական հարևանությամբ, ռուսական էներգակիրներից զգալի կախվածությամբ և ռուսական ֆինանսական ակտիվների ու շուկաների հետ մի շարք բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների սերտ փոխկապվածությամբ:

Անդրադառնալով համաշխարհային ֆինանսական համակարգի վրա հակամարտության ազդեցություններին՝ պետք է նշել, որ վերջինս ևս մեծ փորձությունների է ենթարկվում պատերազմի ազդեցությունների՝ տարբեր խողովակներով տարածման արդյունքում: Դրանք ներառում են ֆինանսական հաստատությունների ռիսկերը՝ կապված ռուսական և ուկրաինական ակտիվների արժեզրկման, շուկայի ցածր իրացվելիության և ֆինանսավորման սահմանափակումների, ինչպես նաև զարգացող շուկաներում ակտիվների կրիպտիզացման տեմպերի զգալի արագացման հետ (մի շարք երկրներում տնտեսական հարաբերությունների մասնակիցներն օգտագործում են կրիպտո ակտիվները տեղական արժույթների փոխարեն):

Պատերազմի տնտեսական հետևանքներով պայմանավորված՝ զարգացող շուկաները և անցումային տնտեսությունները ներկայումս բախվում են կապիտալի արտահոսքի ավելի մեծ ռիսկերի հետ: Աշխարհաքաղաքական անորոշության պայմաններում արտաքին

Ֆինանսական պայմանների խստացումը և ԱՄՆ Դաշնային պահուստավորման համակարգի կողմից դրամավարկային քաղաքականության ակնկալվող կոշտացումը [4] (տոկոսադրույքի առաջին բարձրացումը տեղի ունեցավ մարտին, երկրորդը՝ մայիսի սկզբին, իսկ հետագայում սպասվում են նոր բարձրացումներ) կարող է հանգեցնել կապիտալի արտահոսքի զգալի աճի:

Ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունները համաշխարհային տնտեսության վրա արտացոլվել են ԱՄՆ գարնանային զեկույցում, որում համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումը նվազեցվել է 2021 թվականի վերջին կանխատեսված 6.1%-ից մինչև 3,6% տոկոս: Ընդ որում՝ 2022 և 2023 թվականներին համար ԱՄՆ ապրիլյան կանխատեսումը համապատասխանաբար 0,8 և 0,2 տոկոսային կետով ցածր է այս կառույցի հունվարյան կանխատեսումից: Միաժամանակ, զեկույցում նշվում է, որ 2023 թվականից հետո համաշխարհային տնտեսական աճը միջնաժամկետ հատվածում կնվազի մինչև 3,3 տոկոս [5]: Փաստացի, տնտեսական աճի նման նվազեցումը հիմնականում արտացոլում է ռուս-ուկրաինական պատերազմի հավանական ուղղակի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա:

Պետք է նշել, որ ԱՄՆ կանխատեսումն ունի որոշակի վերապահումներ այն առումով, որ սպագայում ռուս-ուկրաինական հակամարտությունը դուրս չի գալու Ուկրաինայի սահմաններից, իսկ Ռուսաստանի դեմ կիրառվող հետագա պատժամիջոցները հետագայում չեն ազդի էներգետիկ ոլորտի վրա (չնայած ելակետային սցենարով հաշվի են առնվում ռուսական էներգակիրների մատակարարումներից եվրոպական երկրների՝ աստիճանական հրաժարման որոշումների հետևանքները և հայտարարված էմբարգոն մինչև 2022 թվականի մարտի 31-ը ներառյալ), իսկ համավարակի ազդեցությունները թե՛ առողջապահական ոլորտի և թե՛ տնտեսության վրա էապես կթուլանան ընթացիկ տարվա ընթացքում:

Ըստ ԱՄՆ զեկույցի՝ որոշակի բացառություններով համաշխարհային տնտեսությունում զբաղվածությունը և արտադրության ծավալները մինչև 2026 թվականը հիմնականում կմնան մինչև համավարակային մակարդակից ավելի ցածր: Ընդ որում, ըստ կանխատեսումների՝ երկարաժամկետ կորուստները շատ ավելի մեծ կլինեն ձևավորվող շուկաներում և զարգացող երկրներում, քան զարգացած տնտեսություններում՝ պայմանավորված այդ երկրներում

կիրառված ավելի սահմանափակ աջակցության միջոցառումների և, ընդհանուր առմամբ, պատվաստումների ավելի ցածր տեմպերի պատճառով [6]: ԱՄՆ կանխատեսումը, ինչպես տեսնում ենք, աչքի է ընկնում չափազանց բարձր անորոշությամբ, և վերջինիս մեջ գերակշռում են գլոբալ հեռանկարի վատթարացման ռիսկերը, այդ թվում՝ կապված պատերազմի հնարավոր սրացման, Ռուսաստանի դեմ պատժամիջոցների ընդլայնման, Չինաստանում համավարակի նոր շտամի տարածման, ինչպես նաև աշխարհում համավարակի բռնկումների վերսկսման հետ: Բացի այդ, ռուս-ուկրաինական պատերազմը մեծացրել է սննդամթերքի և էներգակիրների գների բարձրացման պատճառով սոցիալական լարվածության ընդլայնման հավանականությունը, ինչը լրացուցիչ բացասական ազդեցություն կունենա համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարների վրա:

Հետհամավարակային ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսության համար բավական ցավոտ խնդիր են հանդիսանում գնաճի բարձր տեմպերը: Անդրադառնալով վերջինիս՝ պետք է նշել, որ, ըստ կանխատեսումների, գնաճի տեմպերը ավելի երկարաժամկետ հատվածում կմնան բարձր մակարդակում, քան նախկինում կանխատեսվել էր՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով հումքային ապրանքների բարձր գնաճը, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների հետագա աճը: Մասնավորապես, 2022 թվականին գնաճը զարգացած տնտեսություններում կանխատեսվում է մինչև 5,7 տոկոս, իսկ զարգացող երկրներում՝ 8,7 տոկոս, ինչը 1,8 և 2,8 տոկոսային կետերով գերազանցում է ԱՄՆ հունվարյան կանխատեսումը: Թեև ելակետային սցենարն ակնկալում է, որ առաջարկի և պահանջարկի անհավասարակշռությունն աստիճանաբար կվերանա, և աշխատուժի առաջարկի թեթևակի աճ կգրանցվի՝ ի վերջո հանգեցնելով գնաճի ավելի ցածր մակարդակի, սակայն այս կանխատեսումը նույնպես մեծ անորոշություններ է պարունակում, քանի որ գնաճին նպաստող պայմանները կարող են նաև ավելի վատթարանալ [5]:

Գնաճը զսպելու նպատակով երկրների կենտրոնական բանկերից առաջիկայում կպահանջվի ավելի կոշտ և արագ արձագանքման միջոցների ձեռնարկում, քան ներկայումս ակնկալում են շուկայի մասնակիցները, ինչի արդյունքում դրամավարկային քաղաքականության բազային դրույքաչափերը կարող են գերազանցել վերջիններիս

չեզոք մակարդակը: Մա, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի համաշխարհային ֆինանսական միջավայրի լրացուցիչ խստացման և տնտեսական աճի դանդաղման:

Ֆինանսական ավելի խստացված պայմանները, ըստ էության, հանգեցնում են համախառն պահանջարկի աճի դանդաղմանը, ինչպես նաև կանխում են գնաճային սպասումները, որոնք հակառակ դեպքում կկորցնեն վերահսկողությունը (այսինքն՝ իրավիճակ, երբ ապագայում գների հետագա աճի ակնկալիքը դառնում է նորմ) և այն աստիճանաբար կվերադարձնեն կառավարելի միջակայք:

Աշխարհաքաղաքական նոր իրողությունները լրացուցիչ բարդություններ են առաջացնում կենտրոնական բանկերի համար, որոնք արդեն իսկ բախվում են տնտեսական աճը խթանելու և միաժամանակ բարձր գնաճը զսպելու դժվարին երկրներանքի հետ, իսկ կառավարությունները՝ խոցելի խավերին աջակցելու և ֆիսկալային բուֆերների ձևավորմանն առնչվող խնդիրների հետ: Մասնավորապես, մոնետար իշխանությունները ներկա իրավիճակում ամեն կերպ փորձելու են գնաճը վերադարձնել թիրախային միջակայք՝ նկատի ունենալով, որ ֆինանսական միջավայրի չափից ավելի խստացումը կզսպի տնտեսական աճը: Հարկ է նշել, որ տարեսկզբից աշխարհի երկրների մեծ մասում, գնաճի բարձր տեմպերով պայմանավորված, արդեն իսկ նկատվում էին ֆինանսական պայմանների զգալի խստացումներ, ինչը շարունակվեց արդեն պատերազմական գործողություններին հաջորդած շաբաթների ընթացքում: Մակայն, չնայած այս խստացումներին, ֆինանսական պայմաններն այնուամենայնիվ զարգացած տնտեսություններում դեռևս մնում են պատմական միջին ցուցանիշներին մոտ, իսկ իրական տոկոսադրույքները բավական հարմարվողական են երկրների մեծ մասում [7]:

Ֆինանսական կայունության բարձր ռիսկերի պայմաններում Ուկրաինայում ռազմական գործողությունների ինտենսիվացման կամ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների ավելի խստացման հետևանքով ռիսկերի հետագա վերագնահատումը կարող է բացահայտել ֆինանսական համակարգի համար այլ խոցելի հատվածներ, որոնք ձևավորվել էին դեռևս համավարակի ժամանակահատվածից, և որոնց սրացումը կարող է հանգեցնել ֆինանսական շուկաներում նոր ցնցումների, մասնավորապես ակտիվների գների կտրուկ անկման:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2022 թվականին ֆինանսական խոցելիության հետ կապված նոր ռիսկեր են առկա հատկապես զարգացող շուկայական տնտեսությունների լայն շրջանակի համար, եթե դրամավարկային ոլորտում խստացումներն ավելի լայն թափ ստանան հատկապես Միացյալ Նահանգների կողմից, որտեղ Դաշնային պահուստավորման համակարգի կողմից, ինչպես վերևում արդեն նշվեց, ընթացիկ տարում բազային տոկոսադրույքը բարձրացվեց 0.25-ից մինչև 1 տոկոս [8]: Բացի այդ, շուկաները սկսել են ավելի վատատեսականորեն վերագնահատել ռիսկերը, ինչը կարող է հանգեցնել հետագա բացասական հետևանքների համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարի վրա:

Իրավիճակն էլ ավելի է բարդանում նրանով, որ հետհամավարակային շրջանում շատ երկրներում պետական հարկաբյուջետային քաղաքականության գործառնական դաշտը բավական սղվել է՝ COVID համավարակի հաղթահարման նպատակով իրականացված սոցիալական և տնտեսական աջակցման լայնամասշտաբ միջոցառումների ֆինանսավորման պատճառով, ինչի արդյունքում պետական պարտքի մակարդակը զգալիորեն բարձրացել է աշխարհի բազմաթիվ երկրների մակարդակով [9]: Ավելին, 2022-2023 թթ. ընթացքում պատերազմը և համաշխարհային մակարդակով տոկոսադրույքների առաջիկա աճը էլ ավելի կկրճատեն հարկաբյուջետային տարածքը հատկապես նավթ և պարենամթերք ներմուծող զարգացող երկրներում, ուստի ներկայումս ազգաբնակչության սոցիալապես խոցելի հատվածի համար պարենի և էներգիայի գնաճից պաշտպանելու նպատակով ծախսերի ավելացումը բավական դժվարիքագործելի խնդիր է, քանի որ վերջինս, ամենայն հավանականությամբ, կխաթարի պետական ֆինանսների կայունությունը: Բացի այդ, ոչ ֆինանսական հաստատությունների և տնային տնտեսությունների փոխառությունների ծավալները աշխարհի բազմաթիվ երկրներում նույնպես էապես աճել են համավարակի շրջանում, երբ շատ կառավարություններ քայլեր ձեռնարկեցին վարկերի հասանելիությունը պահպանելու համար: Հետագայում սա ևս կարող է բավական լուրջ խոցելիություններ ստեղծել վարկային շուկայում, քանի որ ինչպես տոկոսադրույքների, այնպես էլ ռիսկի գծով պարզնավճարների մակարդակն աստիճանաբար բարձրանում է, ինչն իր հերթին կարող է լուրջ հետևանքներ ունենալ ֆինանսական համակարգի կայունության վրա:

Պատերազմի արդյունքում ի հայտ եկած շուկի աննախադեպ բնույթով պայմանավորված՝ ներկայիս տնտեսական իրավիճակը բավական բարդ է, և արտաքին միջավայրի անորոշությունների ֆոնին խիստ կարևոր է ապահովել ազգային տնտեսությունների հավասարակշռությունը՝ միաժամանակ բարձրացնելով տնտեսական կարգավորման քաղաքականության արդյունավետությունը: Կարճաժամկետ հեռանկարում կենտրոնական բանկերից կպահանջվի ավելի վճռական միջոցներ ձեռնարկել՝ կանխելու գնաճի խրոնիկ բնույթը և հնարավորինս խարսխել տնտեսության մեջ ապագա գնաճային սպասումները: Ընդ որում՝ գնաճը նպատակային թիրախին վերադարձնելու համար կարող է պահանջվել ավելի բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքների սահմանում, քան դրանք ներկայումս ակնկալվում են շուկայի մասնակիցների կողմից, ինչի հետ կապված անհրաժեշտ է ճիշտ հաղորդակցություններ ապահովել վերջիններիս հետ: Ընդ որում՝ զարգացող երկրներում, որտեղ շատ կենտրոնական բանկեր արդեն իսկ զգալիորեն խստացրել են դրամավարկային գործիքակազմը, այդ ուղղությամբ միջոցառումները պետք է շարունակվեն, որպեսզի պահպանվեն շուկայի մասնակիցների և տնային տնտեսությունների վստահությունը կառավարությունների հանդեպ՝ գնաճի դեմ պայքարելու և գնաճային սպասումները խարսխելու վերջիններիս վճռականության մեջ: Բացի այդ, մոնետար քաղաքականություն մշակողները պետք է հստակ սահմանազատեն ընտրովի մակրոտնտեսական գործիքները՝ դրանք առավել խոցելի տնտեսական ոլորտներում կիրառելու իմաստով՝ միաժամանակ խուսափելով ֆինանսական պայմանների համատարած խստացումից: Այսպիսով, կարևոր է հնարավորինս ճշգրիտ հավասարակշռություն ապահովել դրամավարկային քաղաքականության խստացման շարունակական գործընթացի և տնտեսական ակտիվության մեծ կրճատում թույլ չտալու միջև՝ հաշվի առնելով անորոշ տնտեսական հեռանկարները, գնաճային ճնշումները և ձևավորված սահմանափակ հարկաբյուջետային տարածքը:

ВЫЗОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В КОНТЕКСТЕ ПОСЛЕДСТВИЙ РОССИЙСКО-УКРАИНСКОГО КОНФЛИКТА

Саргсян К. С.

В статье представлены экономические последствия русско-украинской войны для экономики стран Мира. В статье также

анализируются вызовы мирового экономического развития в постпандемическом периоде в контексте экономических последствий войны.

Ключевые слова: Российско-украинский конфликт, мировая экономика, денежно-кредитная политика, фискальная политика, инфляция.

ECONOMIC DEVELOPMENT CHALLENGES WITHIN THE CONTEXT OF THE CONSEQUENCES OF THE RUSSIAN-UKRAINIAN CONFLICT

Sargsyan K. S.

The article presents the economic consequences of the Russian-Ukrainian war for the economies of the countries of the world. The article also analyzes the challenges of world economic development in a post-pandemic period in the context of the economic consequences of the war.

Keywords: Russian-Ukrainian conflict, world economy, monetary policy, fiscal policy, inflation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Կ. Ս. COVID-19-տնտեսական մարտահրավերներ և հաղթահարման հիմնախնդիրներ: Եր.: «Տիր» հրատ.: 2021: 124 էջ:
2. <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/01/25/world-economic-outlook-update-january-2022> (30.04.2022)
3. <https://www.imf.org/en/Publications/GFSR/Issues/2022/04/19/global-financial-stability-report-april-2022> (03.05.2022)
4. <https://www.federalreserve.gov/releases/h15/> (03.05.2022)
5. <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/04/19/world-economic-outlook-april-2022> (03.05.2022)
6. <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/04/19/world-economic-outlook-april-2022#Chapters> (08.05.2022)
7. <https://tradingeconomics.com/country-list/interest-rate> (08.05.2022)
8. <https://www.federalreserve.gov/newsevents/pressreleases/monetary20220504a.htm> (08.05.2022)
9. <https://www.worldbank.org/en/programs/debt-statistics/ids/products> (30.04.2022)

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգսյան Կ. Ս. – տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոն

Էլ. փոստ՝ mariana.sargsyan80@gmail.com

Ստացվել է խմբագրություն՝ 11.05.2022

Գրախոսվել է՝ 14.10.2022